

1 սմ. : — ՏՈՂՔ՝ 19 : — ԹԱՆԱՔ՝ սեւ. վերնագրերը, սկզբնամատողերն ու սկզբնատուները ոսկեգույն, կապույտ, կարմիր : — ՊԱՏԿԵՆՆԵՐ՝ շատ կան. կանաչներուն մէջ եւ չորս Աւետարաններու սկիզբը 14 կամաբար քակատագրող, հինգ մեծագիր պատկեր, 146 լուսանկարային եւ 66 փոքր պատկերներ՝ լուսանկարներու վրայ. բազմաթիւ թռչնագրեր եւ այլ գարդագրեր՝ բոլորն ալ գաղափար ու գեղեցիկ : — ԳԻՐ՝ բոլորգիր : — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ լաւ. կտրուած համուած են միայն վերջին 349րդ բերքը ամբողջովին եւ 339րդ բերքին երկրորդ սիւնակը : — ԴԱՍԱՐԿ ԹՈՒԻՂԹ՝ էջ 1ա, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 14ա, 108ա, 171ա : — ԳՐԻՉ՝ Սարգիս Բաղանայ : — ԹՈՒԱՎԱՆ՝ 2ՂԹ = 1350 : — ՏԵՂ՝ մայրաքաղաքն Սիւ : — ՏԵՐ՝ Անդրեաս եպիսկոպոս : — Ձեռագիրս այժմ կը պատկանի Մովսէս Խան Խաչատրեանի, որ հորերս միայն գնեց Սալմաստէն Եկած գաղթականէ մը. ըստ այսմ ձեռագիրս ալ բերուած է Սալմաստի կամ վանի կողմերէն :

Մատենան է Աւետարան, որ կը պարունակէ՝ էջ 1բ—10ա Կանոնք. էջ 11ա Նախադրութիւն Մատթէոսի Աւետարանին. էջ 11բ—12բ Գլուխք Մատթէոսի աւետարանին. էջ 13ա—բ Համաձայնութիւն Նախասացեալ գլխոյս. էջ 15ա—105բ Աւետարան ըստ Մատթէոսի. էջ 106—107բ Նախադրութիւն եւ գլուխք Մարկոսի աւետարանին. 109ա—167ա Մարկոս. էջ 167բ—170ա Նախադրութիւն եւ գլուխք Դուկասու աւետարանին. էջ 172ա—265ա Դուկաս. էջ 265բ—267ա Նախադրութիւն եւ գլուխք Յովհաննու աւետարանին. էջ 268ա—336բ Յովհաննէս :

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

էջ 7բ. Լազարոսի գ տարցի գոյնիս :
 էջ 14բ. Անդրէաս եպ՝ սիրեաց զաւետարանս :
 էջ 108բ. Անդրէաս եպ. է աւետարանս :
 էջ 171բ. ՁԱնդրէաս եպոս. յիշեցէք յաղ(աւթս) :
 էջ 267բ. Շինեալ ձեռամբ սարգիս քահնի :
 Ի խորոյ Անդրէասի եպիսկոպոսի :
 էջ 336բ (Գլխաւոր յիշատակարան). Փառք անըսկիրն էին հաւր եւ էնն ի յէնն ծնեալ անժամանակ որդոյն եւ էակից եւ փառակից սուրբ հոգւոյն : Երեք անձնաւորութեանն եւ մի՛ աստուածութեանն այժմ եւ յանբաւ յաւիտեանն ամէն : Ա(ստուա)ծայի՛ն եւ երկնաւոր շնորհն որ պարեւէ (իմա՛ պարզեւէ) ամենեցուն բազմապատիկ պարեւս (իմա՛ պարզեւս)՝ ըստ իւրաքանչիւր աւտի. եւ յաւժա՛ր կամաց հաւատով խնդրողաց : Նոյն ինքն աստուածն բոլորիցս՝ որ առա՛նն է ի սուրբ եւ բարեք [էջ 337ա] ար ամենեցուն. որ եւ զիս զանարժան հոգիս արժանի արար իւրում ողորմութեանն Նոյն ինքն զկատարումն՝ ըստ հաճոյցն իւր պահեցէ : զի պարզեւէն աստուածային է. բայց բարիք վայելեալն ըստ յաճողելոյն է՝ եւ ի կամս վայելողին : Արդ ես տրուայ հոգի. եւ անկատար յամենայն դո՛րծս բարեաց անդրէաս եպիսկոպոս. Ի ժամանակիս յորում

էր թվականս հայոց. 2ՂԹ. որում էր կաթուղիկոս հայոց տէ՛ր մխիթար. եւ բարեպաշտ թաղաւոր. Կոստանդին. Որ եւ ես եկեալ ի մայրաքաղաքս ի սիս առաջի սուրբ շնորհարարն քահանայապետիս : Տեսի զսուրբ աւետարանս. որ համակ ոսկով. եւ ծաղկերս՛նց վայելչութեամբ. եւ զարմանալի պատկերաւք հրաշագործեալ է ձեռամբ սարգիս քահանայի. որ է շնորհաւք հոգոյն [էջ 337բ] ընցեալ. եւ այր զովելի. եւ սիրեցի՛ զսա յամենայն սրտի կամաց. եւ ստացայ զսուրբ աւետարանս քրիստոսի յայժմու կենացս հոգւո՛յ եւ մարմնոյ իմոյ. եւ ըստաց մխիթարութիւն, եւ ի հանդերձեալն յո՛յս բարեաց. եւ յիշատակ կենաց առաջի քրիստոսի՛ ի՛նձ եւ ծնաւորացն իմոց : եւ հոգեւո՛ր եւ մարմնաւոր եղբաց իմոց : եւ ամենայն հաւատացելոց. եկեղեցւոյ քրիստոսի պայծառութիւնն եւ մանկանց սինի հրճուանք եւ ցնծութիւն. Արդ հաւատով խնդրեմ ի քրիստոսի մարդասիրութեանն զի զսուրբս իմ վասն անա. եւ զսէր ըզձի սրտիս իմոյ. առ ի՛ւր համարեցի աստուածային մարմնոյ ընծայարեւութիւն որպէս զպոստիկ կնոջն զեղն աւժութեանն եւ քանանացի տիրատէր շանս տացէ մառն (իմա՛ մասն) ողորմութեան ի փշրանաց սեղանոյ իւրոյ. եւ ընդ միւս [էջ 338ա] այլ կնոջն. յանցաւորի. բազմամեղ ծառայիս հրամայեցէ. հաւատք եւ սէր քո որ սոված առ իս՝ կեցուցեցն զքեզ. Ե՛րթ ի խաղաղութիւն. եւ եղիցիս ո՛ղջ ի տանջանաց : Ձի արարչին անսահման բնութեանն միշտ զբարեբարե՛նն է՝ առ արարածս սահման : Արդ ես անդրէաս եպիսկոպոս յերես անկեալ աղաչեմ զմանկունս սինի. որք սպասաւորէ՛ք սմա. կամ ընթեանոյք. երկիրէ՛ւ եւ սրբութեամբ ծառայեցէք սմայ՝ եւ զիս զանդրէաս եպիսկոպոս. եւ զծնաւորս իմ յիշեցէ՛ք ի սուրբ յաղաթս ձեր. առաջի սուրբ պատարագին քրիստոսի. եւ աստուած որ ողորմածն է ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս ողորմեացի. ամէնն եւ նմա փա՛ռք յաւիտեանն ամէն. Ընդ նմին եւ իմոյ անարժանութեանս սարգիս նը՛ւ. քահնի. (իմա՛ նուաստ քահանայի) որ բազում աշխատու [էջ 338բ] թեամբ յանկ հանեալ աւարտեցի զսուրբ աւետարանս զայս վասն զանուութեան ժամանակիս եւ ծերութեան իմոյ. նա՛խ զաղափար առնելով. եւ ապա ոսկով եւ ծաղկէ՛ւ զարդարեցի. եւ ազգի՛ ազգի՛ պատկերնով որ ի սմա՛յ համարարանս ու՛նի խորնո՛նն եւ աւետարանչերո՛նն. Արդ ես սարգիս աղաչեմ զձեզ ով զասք լուսերամից եւ պատուական սուրբ քահանայք եւ սարկաւազունք՝ որք ընթեանո՛յք զիս լցեալ մեղաւք ի լե. յիշման առնէ՛ք զիս արժանի. ջնացի : եւ զուգակցին իմոյ եւ ծնո՛նցն (իմա՛ ծնաւորացն) իմ գնացելոցն առ քրիստոս եւ ամենայն արեանատու իմոյ եւ ամենայն [էջ 339ա] հաւատացելոց. եւ որ զմեզ քրիստոս աստուած զձեզ յիշէ եւ զծն՝ (իմա՛ զծնաւորսն) ձեր ի ձեր սուրբ արքայութիւնն ամէն ամէն :

Օտար զընէ աւելցուած է, բայց թերթին երկրորդ սիւնակը կտրուած հանուած ըլլալով՝ կը մնայ միայն Տեւեեալը.

Գրիստոս աստուած քո սուրբ շար խաւսութեամբ. ողորմես (քերած) Յակոբ վերստին նորոգել զսա զարեա եւ զրեա զսա եւ բութիւն կենաց.

Ի թվ. ՊՂ (միաւորը՝ Եթէ կար՝ կտրուած մասին մէջն է) :

Գլխաւոր յիշատակարանէն կ'երեւայ որ ձեռագրերս ո՛չ միայն զրէչը, այլ եւ անոր գեղեցիկ ու ճաշակաւոր նկարներու ծաղկողը վերոյիշեալ Սարգիս քահանան է. ուստի անոր անունը պէտք է անցունել մեր մանրանկարչութեան լուսողոյն վարպետներու շարքին մէջ :

3.
Ո Ս Կ Ե Բ Ե Ր Ա Ն
 ԺԴ.—ԺԵ. դար :

ԹՈՒՂԹ՝ 205. լուսանկարի վրայ նշանակուած են քերքերը Ա—ՃԳ՝ առանց հաշուելու առաջին եւ վերջին չգրուած քերքերը : — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 17 X 12 X 4 սմ. : — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ, որ ներսի կողմէն պատած է կտաւով : — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱԶՊԱՆԱԿ՝ չկայ : — ՆԻԻԹ՝ քուրք : — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին. տող՝ 21 : — ԹԱՆԱՔ՝ սեւ. սկզբնամատողերն ու սկզբնատուները կարմիր, բայց բոլորովին անգար : — ՊԱՏԿԵՆՆԵՐ՝ չկան. կան միայն մի քանի շատ հասարակ կարն խորաններ ու լուսանկարային : — ԳԻՐ՝ բոլորովին խորաններ ու լուսանկարային : — ԳԱՍԱՐԿ ԵՂ 1աբ, որ իրեն պահպանակ զրուած է եւ ԹՈՒՂԹ՝ էջ 1աբ, որ իրեն պահպանակ զրուած է եւ Եջ 205բ՝ որ գրքին վերջին էջն է : — ԳՐԻՉ ՆԻ ՏԵՐ՝ Գրիգոր : — ՏԵՂ՝ անյայտ : — ԹՈՒԱՎԱՆ՝ ԺԴ.—ԺԵ. դար : — Ձեռագիրս այժմ կը պատկանի Թեհրանցի Բժիշկ պր. Պետրոս Պետրոսեանի :

Մատենան է Ոսկերեւան, որ կը պարունակէ.

ա. էջ 2ա—123բ. Պատճառք առաջին թղթոյն Թեաղոնիկեցւոց Յովհաննու ոսկերեւանի Կոստանդնուպոլիսի հայրապետի արարեալ. Պաւղոս եւ սիրողիանոս եւ տիմոթէոս եկեղեցւոյ թէաղոնիկեցւոց, յաստուած ի հայր... (Պողոսի Ա. Թեաղոնիկեցւոց թղթոյն Յովհաննու Ոսկերեւանի ամբողջական մեկնութիւնն է 11 գլխու մէջ) :

բ. էջ 124ա—177ա. Պատճառք երկրորդ թղթոյն Թեաղոնիկեցւոց ի փոստ աստուծոյ : Յովհաննու Ոսկերեւանի : Ասաց յառաջնում Յովհաննու Ոսկերեւանի : (Պողոսի Բ. Թեաղոնիկեցւոց թղթոյն Յովհաննու Ոսկերեւանի ամբողջական մեկնութիւնն է 5 գլխի մէջ ամփոփուած) :

գ. էջ 177բ—204բ. Պատճառք թղթոյն որ առ Փիլիմոն : Նախ զպատճառ թղթոյն կարեւոր համարիմ ասել... (Պողոսի առաջելոյ առ Փիլիմոն թղթոյն ամբողջական մեկնութիւնն է 3 գլխով) :

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

էջ 11բ. Կամաւ ամենակալին աստուծոյ եւ անարժանս զրիգոր յետ իմ մահու կու տամ զգիրս զայս ի կանչոյն սուրբ ստեփանոս. Ի յիշատակ ինձ եւ ամենայն ազգականաց իմոց : եւ որ մեզ մեղաց թողութիւն խնդրէ, աստուած եւ զնորայն թողցէ. ա՛մմէնն :

էջ 36բ. Աշխատողացն ի սմայ ողորմեացի քրիստոս աստուած. եւ այնոցիկ որ զամէնն ասեն :

էջ 58բ. Գծողի սորա ողորմեացի քրիստոս աստուած. ամմէնն :

էջ 74բ. Չբազմամեղ զրիս զգրիս զսատանալս յալեաց շար խորհրդոց. եւ զծնաւորս իմ. եւ զամենայն հաւատացեալս, յիշե՛ւ արժանի արարէք եւ յաստուածահաճոյ աղաթս ձեր ո՛վ ընթերցողք եւ լաւագ չողեւոր մատենիս : եւ աստուած յիշեցէ. ա՛մմէնն :

էջ 86բ. Քրիստոս աստուած զբազմամեղ զրիս եւ ծնողսն իմ եւ զեղբարսն եւ զամենայն հաւատացեալս քո փրկեայ ի գեհնէն. եւ քո արքայութեանն արժանացոյ : ամմէնն :

էջ 100ա. Խնամ սար զրոյն զի լուսանցս քիչ է. նա աստուած ի քեզ խնայէ :

էջ 123ա—բ. Աւարտեցաւ թուղթ Թեաղոնիկեցւոց առաջին, ի փա՛ռս աստուծոյ : ամմէնն : Արդ որք լուսաւորիք ի լուսափայլ բանից որ ի սմա յիշեալիք յարժանաւոր յաղաթս ձեր զբազմամեղ եւ զանարժանս զգրիս զստացաւ զրոցս եւ զգրաւ զրոցս եւ զհայրն իմ զվահրամ եւ զմայրն իմ. եւ զերեսին եղբարսն իմ զյառաջեալսն առ քրիստոս. եւ զմիւս եղբայրն իմ զստեփանոս ք՛հ. եւ ամենայն զազգայինսն իմ զկենդանիսն եւ զհանգուցեալսն : Աղաչեմ յիշել եւ զայգիկենդանիսն եւ զհանգուցեալսն : Աղաչեմ յիշել եւ զայնոսիկ որք աշխատակից եղին մեզ ի պատրաստել թղթոցս եւ յրողել զրոցս եւ որք յորդորեցին զմեզ ի գրել զգիրս : եւ որ առատն է ի սուրբ ողորմութեան զացդ եւ մեզ յիշեալսցս : Ողորմեացի քրիստոս աստուած ամենայն հաւատացելոց կենդանեաց եւ ննջեցելոց. եւ նմա փա՛ռք յաւիտեանս. ամմէնն : Ողորմութեան լոց եւ սխալանաց որ ի սմա անմեղաղիւ լերուք, զի այդպիսի էր կար մեր :

էջ 177ա. Չբազմամեղս զրիգոր եւ զծնողսն իմ յիշեցէք ի տէր. եւ աստուած զձեզ յիշէ ամմէն ամմէն :

էջ 204բ. Որք ազաթիք ի լուսաւոր բանիցս զանարժանս զրիգոր եւ զծնաւորսն իմ եւ զեղբարսն իմ յիշեցէք ի տէր եւ աստուած զձեզ յիշէ :

էջ 205ա. Հայցեմ ի ձէնջ հարց եւ եղբարց որք հանդիպեք աստուածայնոց եւ երկնահարկեր մեկնութեանց զվերջին ստացող սորին յիշեալիք ի մարգարփայլ յաղաթս՝ զյետեալ ծառայս ձեր եւ ողորց բազմաց ստորակացեալս զՅովսէփ անարգիւն քահանայս,

